

ՈՐՈՇՈՒՄ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

16.08.2021թ.

ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն բաժնի ավագ հարկադիր կատարող արդարադատության ավագ լեյտենանտ Ա.Ամիրջանյանս ուսումնասիրելով՝ թիվ 0264111/կատարողական վարույթի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

«Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 27.09.2016թ. փրված թիվ ԵԿԴ/1102/02/16 կատարողական թերթի համաձայն պետք է Գեղամ Գագիկի Պողոսյանից հոգուր «ՎՏԲ-Հայաստանբանկ» ՓԲ ընկերության բռնագանձել 1.110.360 ՀՀ դրամ գումար և հաշվեգրվող փոկոսները, մինչև պարտավորությունների փաստացի կատարման օրը:

Բռնագանձումը փարածել ՈՎ 051 14 02278 պայմանագրով գրավի առարկա հանդիսացող իրերի վրա:

Ձեռնարկված կատարողական գործողությունների արդյունքում, գրավի առարկայի շուկայական արժեքը որոշելու համար կայացվել է «Փորձագետ նշանակելու մասին» որոշում, որի կատարումը հանձնարարվել է Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյանին:

Ըստ Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյանի կողմից տրված եզրակացության 19.07.2021թ-ի դրությամբ Գեղամ Գագիկի Պողոսյանին պատկանող /թվով 5/ «ՎՏԲ-Հայաստանբանկ» ՓԲ ընկերությունում գրավադրված ոսկու արժեքը ընդհանուր կազմում է 605.600 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1, 35.2, 35.3 և 35.4 հեղվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

Պարտապան Գեղամ Գագիկի Պողոսյանին պատկանող գրավադրված ներքոհիշյալ գույքերը

h/h	լուծի անվանումը	գնահատման գինը	մեկնարկային գինը	գույքի քանակը	քաշը	հարգ
1	Ոսկյա թևնոց	330.000 դրամ	247.500 դրամ	1 հատ	20,0 գր	583
2	Ոսկյա թևնոց	82.500 դրամ	61.875 դրամ	1 հատ	5,0 գր	583
3	Ոսկյա վզնոց	82.500 դրամ	61.875 դրամ	1 հատ	5,0 գր	583
4	Ոսկյա մատանի	61.100 դրամ	45.825 դրամ	1 հատ	3,7 գր	583
5	Ոսկյա ականջոց 1 գույգ	49.500 դրամ	37.125 դրամ	1 հատ	3.0 գր	583

ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ harkadir.ajurd.am միջոցով:



Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 06.10.2021թ.

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ավագ Հարկադիր կատարող,
արդարադատության ավագ լեյտենանտ



Ա.Ամիրջանյան

Ծ Ա Ն Ո Ւ Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում գետնելվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո: